ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<05>> հուլիսի 2017թ. N 187-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N 140-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և <<Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի վեցերորդ մասով.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հուլիսի 4-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող և ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 140-Ա որոշման հավելված 1-ում կատարել փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի մայիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2017 թվականի մայիսի 3-ի
N 187 - Ա որոշման

# ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների

| h/h | Անուն, ազգանուն | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկա-գիրը | Տվյալ պաշտոնում աշխա-տանքային ստաժը | Բազային աշխատավարձի նկատմամբ գործակիցը | 2017թ. մայիսի 1-ից սահմանվող պաշտոնային դրույքաչափը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հիմնական /ըստ գործակցի սյուն.6x66140 դրամ/ | հավելում | ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 8 | Գայանե Սայադյան Հայրապետի | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ | 63-2.1-6 | 13տ.+ | 6,09 | 402793 | | 402793 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ф.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ